վախճանի ցանկս երկուս համառօտս, մին՝ յատուկ անուանց մարդոց, և այլն, և միւս այլ՝ քաղաքաց, տեղեաց, և այլն։

Այսչափ ինչ դոյզնաբանեալ վասն փոքրու աշխատութեանս, ոչ այլում խնդիր փոխարինի ակն ունիմք, բայց զներողամտութիւն ևեթ գտանել 'ի բարեսէր կամաց հանդիպողացս. զայս աղաչելով զի մի անաչառ դատաւորք միայն և քննողք լինիցին այսմ, յուշ ածեալ զբան մեծին Յ. Աքալիկերեայ. Երէ դատաւոր 'ի խիստ պատուհաս կամիցի զոք արկանել, մատնեացէ զնա 'ի բառագիրս յորինել։ Զի արդահատութեան թէ գոցի արժանի մերս այս ջան, սրտապնդեսցի արդեաք և աշխատող Նորին ոչ ինչ վհերել արկանել ձեռն և յայլ նմանօրինակ վաստակս՝ յօգուտ և 'ի պատիւ թարգմանեան գրոհիս, որոյ անուն և սէր միշտ վառեաց զաչ և զսիրտս որդւոյ Մխիթարայ՝ ճգնել 'ի զարգացումն Նորին։

Հ. Մ. Պ.

ԲԵՄԱՍԱՑՈՒԹԻՒՆՔ Ի ՏԻՐԱՄԱՑՐՆ

Երեցունց հարց արդի ճարտարախօսութեան
Պոսիէի Մեղդաց Եպիսկոպոսի, Մասիլիոնի Քլերմոնի եպիսկոպոսի
և Հօրն Պուրտայոսի։

Յուքանամենի ծերութեան իմում փափաքելով դոյզն ինչ նուէր սրբոյ դուսին մատուցանել, խորհեցայ ժողովել 'ի մի որ ինչ երեցունց Հարց քրիստոնէական արդի ճարտարախօսութեան յօրինեալ է բեմասացութիւնս 'ի Տիրամայրն. յորս բովանդակին և որ ինչ Հարց նախնեաց իմաստք ներբողականք գնմանէ։ Ոչ ոք 'ի բանասիրաց ժխտէ, զի ճարտարախօսքս այսոքիկ գլխաւորք՝ են Պուսիէ Մեղդաց եպիսկոպոս, Մասիլիոն Քլերմոնի եպիսկոպոս, և Հայրն Պուրտալու յիսուսեան, որ ճառիւքն իւրեանց մեծացուցին զվիճակս Տիրամօրն, և նոքաւ զԱստուածորդւոյն, որչափ ինչ հնար է մնաց մահկանացուի ըմբռնել, և գրչի բացատրել զայնս։

Հաղորդս վաստակոց նոցա ընդունել և զանարժան նոցին թարգմանիչ՝ խընդրեմ՝ 'ի Տիրամօրէն։

Հ. ԵԴՈՒԱՐԴ ՀԻՒՐՄԻՒՐ
Արքեպս. Շիրակայ։

digitised by A.R.A.R.@